

## ԲԱՐԵԿԵՑԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԳԱՎԱՌԻ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՈՒՄ

Գավառ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի ֆիզիկական ու մտավոր խնդիրներ ունեցող 60 աշակերտների համար Հայ օգնության ֆոնդի աջակցությամբ այսուհետ գործելու է վերականգնողական եւ բուժական սրահը, հիմնանորոգված շքամուտքը եւ մուտքի նորակառույց թեքահարթակը: ՀՕՖ-ը երկար ժամանակ է, ինչ համագործակցում է Նյու Յորքի օժանդակ կոմիտեի հետ՝ այդ դպրոցում իրականացնելով բարեգործական բազմաթիվ ծրագրեր: Վերոնշյալ ծրագրերի կողքին նորոգվել են այդ դպրոցի ուսումնական գործընթացի անբաժանելի մաս հանդիսացող կավագործության, փայտամշակման եւ կարի արհեստանոցները եւ ապահովվել անհրաժեշտ սարքավորումներով ու հումքով: Իրականացված ծրագրերից հետո սեպտեմբերի 17-ին տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որին ներկա էին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը, մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ Գարիկ Բադայանը, ՀՕՖ Նյու- Յորքի օժանդակ կոմիտեի ղեկավար Գրիգոր Գրիգորյանը, ՀՕՖ-ի անդամներ, հատուկ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, ծնողներն ու աշակերտները: Վերականգնողական եւ բուժական սենյակի նորոգումը, բուժսարքավորումների տրամադրումը եւ երկու մասնագետ բժիշկների վերապատրաստումը հնարավոր է դարձել ՀՕՖ-ի Նյու-Յորքի օժանդակ կոմիտեի անդամ ժանո Օզգենների առատաձեռն նվիրատվությամբ:

Գավառի թիվ 1 հատուկ օժանդակ դպրոցին ցուցաբերած տեւական եւ բազմաբնույթ օժանդակության համար Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով էր պարգևատրել ՀՕՖ Նյու-Յորքի օժանդակ կոմիտեի ղեկավար Գրիգոր Գրիգորյանին եւ նույն կոմիտեի անդամ ժանո Օզգեններին: Օժանդակ կոմիտեի մի խումբ անդամներ պարգևատրվեցին նվերներով: Շնորհակալագրերը եւ նվերները բարերարներին հանձնեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Նա իր խոսքում կարեւորեց Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը եւ շեշտեց, որ Գեղարքունիքի մարզպետարանը պատրաստակամ է ցանկացած հայրենաշեն ծրագրի հետ համագործակցելու, աջակցելու համար: Ինչպես տեղեկացրեց ՀՕՖ-ի կրթական եւ գիտական ծրագրերի ղեկավար Էդուարդ Կարապետյանը, այսուհետ էլ Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի համար ՀՕՖ-ը շարունակելու է աջակցության բազմաբնույթ ծրագրերը, որոնցից առաջնահերթը լինելու է հենաշարժային խնդիրներ ունեցող երեխաների համար շենքի ներսում վերելակի կառուցումը: